

4.2.2. Ներքին զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների՝ 2009թ. հունվար-դեկտեմբերին հանրապետության տարածքում տեղաբաշխված զբոսաշրջիկների կոլեկտիվ և անհատական տեղավորման միջոցներում (կացարաններում) տեղավորվել են 435674 զբոսաշրջիկներ (ՀՀ ռեզիդենտներ), ինչը 2008թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 2.6%-ով:

Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի

(մարդ)

	2008 թ. հունվար- դեկտեմբեր	2009 թ. հունվար- դեկտեմբեր	Աճի տեմպը, %	Տեսակարար կշիռը (2009թ. հունվար-դեկտեմբեր, %)
Ընդամենը զբոսաշրջիկներ¹	447234	435674	97.4	100.0
որոնցից ըստ նպատակի՝				
գործնական	111361	103154	92.6	23.7
հանգստի և ժամանցի	228984	229303	100.1	52.6
բուժման	56352	54931	97.5	12.6
այլ	50537	48286	95.5	11.1

¹ Տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցներում, հյուրանոցային հանգրվաններում, առողջարաններում, հանգստյան տներում հաշվառված զբոսաշրջիկներին: